

սպասուց կամ կարասեաց թուռոյն եւ ձեւոց վրայ միանգամայն :

2. — Հունանիշք: — Տագնապալից պարագայ մ'է բանասիրաց համար՝ հունանիշքիւն իրարու ժամանակակից եւ մանաւանդ արմատական շատ բառերու, եւ բազմանիշքիւն մէկ բառի, ոչ միայն ընդհանուր լեզուին, այլ յատկապէս մեր խնդրոյն մէջ ալ, ինչպէս տեսանք եւ զգացինք: Իբր սկզբունք կրնանք ըսել՝ թէ այդ երկու հանգամանք եւս իրապէս կան մեր լեզուին մէջ. սակայն զգուշութեամբ ընտրելի է զանոնք:

Գալով առաջնոյն, չափազանց է բուր հոմանշից մէջ անվրէպ զանազանութիւն մը փնտռել, եւ կամ անոր հակառակ՝ բոլորը նոյնացնել իմաստով: Բայց կային ժամանակակից բառից մէջ իրական հոմանշեր, որոնք արդիւնք էին կամ գաւառական խօսից տարբերութեան, կամ լեզուական յեղաշրջութեան, որով բառ մը՝ որ պիտի մեռնէր, կամ առանին գործածութենէն պիտի փոխադրուէր սրբավայրին մէջ (ինչպէս մաղզմալ եւ սկիհ), եւ ուրիշ մը՝ որ անոր պիտի յաջորդէր նոյն ենթակային վրայ, եւ կամ տոհմային եւ իշխեցող լեզուի մը հոմանիշք՝ իրարու կը հանդիպէին, եւ լծակցաբար կը